



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ  
*N2 (76) հոԼ նվարի 21 – մայիսի 20***

17 հոԼԼ իսի 2015

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>1. Հարկային և մաքսային օրենսդրության նորոգյալ օրենքներ</b> .....	2
<b>1.1 ՀՀ օրենքներ</b> .....	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ .....	5
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ .....	8
<b>2.Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ</b> .....	12
2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննության օրենքների.....	12
2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ .....	13
2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ .....	14

**1. Հարկային և մաքսային օրենսդրության նորոգյալ օրենքներ**

**1.1 ՀՀ օրենքներ**

Փաստաթուղթ	«Շահույթահարկի մասին»	ՀՀ օրենքում
------------	-----------------------	-------------

	լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը
Ամսաթիվը և համարը	12.03.2015, ՀՕ-4-Ն,
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 14 (1103), 18.03.2015թ
Ուժի մեջ է	19.03.2015

**Համառոտ նկարագիր**

Օրենքում կատարված լրացման և փոփոխության համաձայն սահմանվել է, որ օրենքով սահմանված պայմանները բավարարող ՀՀ ռեզիդենտ հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողի կամ ռեզիդենտ հարկ վճարողի շահույթահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է՝

- 2% դրույքաչափով, եթե հարկ վճարողի կամ հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 50 մլրդ դրամ կամ՝

- 5% դրույքաչափով, եթե այն կազմում է առնվազն 40 մլրդ դրամ:

Օրենքը տարածվում է 2015 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների վրա:

Փաստաթուղթ	«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը
Ամսաթիվը և համարը	12.03.2015, ՀՕ-5-Ն,
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 14 (1103), 18.03.2015թ
Ուժի մեջ է	05.03.2015

**Համառոտ նկարագիր**

Օրենքի նոր խմբագրությամբ հաստատվել է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից:

Օրենքը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	12.03.2015, ՀՕ-6-Ն,
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 14 (1103), 18.03.2015թ
Ուժի մեջ է	19.03.2015

### Համառոտ նկարագիր

Նպատակ ունենալով կարգավորել ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ ներմուծումների եւ ՀՀ-ից ԵՏՄ անդամ երկրներ արտահանումների իրականացման դեպքերում մաքսային վճարների հաշվարկման եւ վճարման կարգին վերաբերող առանձին հարցեր ու ԵՏՄ-ում գործող միասնական մաքսային օրենսգրքով չկարգավորված առանձին հարաբերությունները՝ օրենքում կատարված լրացմամբ նշվել է, որ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները (ներմուծվող ապրանքների համար հաշվարկված և ակցիզային հարկի գումարների վճարման ժամկետ) չի տարածվում այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների վրա, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից:

Օրենքը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	12.03.2015, ՀՕ-7-Ն,
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 14 (1103), 18.03.2015թ
Ուժի մեջ է	19.03.2015

### Համառոտ նկարագիր

Պայմանավորված ԹԿազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույթաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն

ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում ⑦ ԶԶ օրենքում փոփոխություն կատարելու մասին ⑦ ԶԶ օրենքի (ՅՕ-5-Ն) ընդունմամբ՝ օրենքով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության ներքին տարածք ներմուծվող ապրանքներից ԱԱՀ հաշվարկվում և գանձվում է մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սահմանին, բացառությամբ՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա ապրանքների:

Օրենքը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

### 1.2 ԶԶ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի N 546-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԶԶ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	22.01.2015, N 80-Ն,
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 7 (1096), 11.02.2015թ
Ուժի մեջ է	12.02.2015

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է շաքարի արտադրության համար առանց ներմուծման մաքսատուրքի վճարման ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1701 13 և 1701 14 ծածկագրերին դասվող ապրանքների (եղեգնից շաքար-հումք առանց բուրահաղորդող ու ներկող հավելումների՝ բացառությամբ շաքարի ճակնդեղի)՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման կարգը՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1330-Ն և 2013 թվականի օգոստոսի 1-ի N 891-Ն որոշումներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԶԶ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	22.01.2015թ, N 29-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 5 (1094), 04.02.2014թ
Ուժի մեջ է	14.02.2015թ

### Համառոտ նկարագիր

Նշված որոշմամբ կատարված փոփոխությունները ու լրացումը պայմանավորված է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման

մասին» ՀՀ օրենքում փոփոխության և կատարելու մասին» ՀՀ օրենքով (17.12.2014թ. ՀՕ-224-Ն) փոքր տնտեսավարող սուբյեկտների համար նոր սերնդի ՀԴՄ-ների ներդրման ժամկետը 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի հունվարի 1-ը հետաձգվում է:

Որոշմամբ փոխարինվել է ՀՀ կառավարության 30.10.2008թ. N1330-Ն և 01.08.2013թ. N891-Ն որոշումներով հաստատված կարգերով որպես պարգևավճար սահմանված համապատասխանաբար 10 և 5 ավտոմեքենաների հարաբերակցությանը 5 և 10 հարաբերակցության, հաշվի առնելով դարձերեսներին հատուկ համարներ պարունակող ՀԴՄ կտրոնների քանակների օբյեկտիվորեն քիչ լինելու հետևանքով ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1330-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան այդ տեսակի ՀԴՄ կտրոնների շահումների քանակների խիստ նվազումը:

ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1330-Ն որոշման գործողության ժամկետը երկարաձգվել է օրենքում կատարված փոփոխության համապատասխան ժամկետով՝ նույն փոփոխության և ներքին կատարելով 01.08.2013թ. N891-Ն որոշման մյուս ժամկետներում, սպահովելու համար մինչև 2016 թվականի հունվարի 1-ը տրամադրվելիք դարձերեսներին հատուկ համարներ պարունակող ՀԴՄ կտրոնների վիճակահանության ներքին մասնակցությանը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության տարածքներում ծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությանը հաստատող և որոշ ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման արտոնության ներքին տրամադրող Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմիններ սահմանելու և Հայաստանի Հանրապետության տարածքներում ծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությանը հաստատող եզրակացության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	10.03.2015թ., N 228-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 15(1104), 25.03.2015թ
Ուժի մեջ է	26.03.2015թ

### **Համառոտ նկարագիր**

Որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքներում ծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությանը հաստատող Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմինների ցանկն ըստ ուղորտների:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը համարը	և 26.03.2015թ, N 379-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 23(1112), 22.04.2015թ
Ուժի մեջ է	02.05.2015թ

### Համառոտնկարագիր

Որոշմամբ հաստատվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաներին և դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը համարը	և 26.03.2015թ, N 380-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 23(1112), 22.04.2015թ
Ուժի մեջ է	02.05.2015թ

### Համառոտնկարագիր

Որոշմամբ հաստատվել են հսկիչ-դրամարկղային մեքենաներին և դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները: Որոշման ընդունման անհրաժեշտությամբ պայմանավորված է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 17.12.2014թ. ՀՕ-224-Ն օրենքի ընդունման արդյունքում նոր սերնդի ՀԴՄ-ների ներդրման վերջնաժամկետի երկարաձգմամբ, որը սահմանվել է 2016թ. հունվարի 1-ը: Արդյունքում, մինչև 2016 թվականի հունվարի 1-ը կիրառվող հին սերնդի ՀԴՄ-ների համար սահմանվել են վերջիններիս և դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները:

Փաստաթուղթ	«Արտահանման ծրագրերի Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության արժանացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը համարը	և 02.04.2015թ, N 387-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 23(1112), 22.04.2015թ
Ուժի մեջ է	02.05.2015թ

### Համառոտնկարագիր

Որոշմամբ հաստատվել է արտահանման ծրագրերի՝ ՀՀ կառավարության հավանության արժանացման կարգը: Որոշումը նպատակ ունի կիրառելի դարձնել 2015 թվականի մարտի 12-ի «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Մասնավորապես, սահմանվել է, որ արտահանման ծրագրի իրականացման տվյալ հաշվետու տարվա ընթացքում հարկ վճարողների խմբի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից «արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխված՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքների մաքսային արժեքի նվազագույն մեծությունը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից՝ առանձին ծրագրերի համար:

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2011» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները կիրառությունից հանելու և «2011» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումն արգելելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	22.04.2015թ, N 416-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 25(1114), 29.04.2015թ
Ուժի մեջ է	30.04.2015թ

### Համառոտնկարագիր

Որոշմամբ 2015 թվականի հունիսի 1-ից կիրառությունից հանվելու է ՀՀ ներմուծվող կամ ՀՀ-ում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2011» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը: Սահմանվել է, որ 2016 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում արգելվում է ՀՀ ներմուծված կամ ՀՀ-ում արտադրված՝ «2011» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված արտադրանքի իրացումը:

### 1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի հանրապետության Ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի N 764-Ն հրամանում լրացում կատարելու մասին» ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	15.01.2015թ, N 6-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5(517), 16.02.2014թ.
Ուժի մեջ է	26.02.2015

### Համառոտնկարագիր



Հրամանով լրացում է կատարվել «Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայ տարարության ձևը հաստատելու մասին» N 764-Ն հրամանի հավելվածով հաստատված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայ տարարության ձևի «գ» ենթակետում, շրջանառության հարկ վճարող չհամարվողների ցանկում ներառվել են աուդիտորական և հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները՝ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին համապատասխան:

Փաստաթուղթ	«Արտահանման և ներմուծման հարկային հայ տարարագրերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	29.12.2014թ, թիվ 965-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3(515), 26.01.2015թ.
Ուժի մեջ է	02.01.2015

### Համառոտ նկարագիր

Հիմք ընդունելով «ՀՀ և Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկություններին մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը (ԱԱՀ-ի զրոյական դրույթաչափի կիրառությունը և (կամ) ակցիզային հարկից ազատումը հիմնավորող փաստաթղթերը) և 8-րդ հոդվածը (Ապրանքների ներմուծման դեպքում հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերը)՝ ՀՀ Ֆինանսներին նախարարի հրամանով հաստատվել են.

1. արտահանման հարկային հայ տարարագրի ձևը՝ համաձայն հավելվածի,
2. ներմուծման հարկային հայ տարարագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

Փաստաթուղթ	«Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի կողմից հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերի ցանկի վերաբերյալ» ՀՀ Ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	23.01.2015թ, N 1
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 4(516), 02.02.2015թ.
Ուժի մեջ է	23.01.2015

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ հստակեցվել է հարկային մարմին ներկայացվող ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված անձանց ընտանիքի անդամ լինելը հիմնավորող փաստաթղթերի ցանկը:

Փաստաթուղթ	«Ընտանեկան ձեռնարկատիրության հարկման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	23.01.2015թ, N 3
Հրատարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 4(516), 02.02.2015թ.
Ուժի մեջ է	23.01.2015

**Համառոտնկարագիր**

Պարզաբանմամբ առավել մանրամասն ներկայացվել է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ չհամարվելու դեպքերը, ընտանեկան ձեռնարկատիրության մասով ապանքների ներմուծման դրույթները, ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամների փոփոխության դեպքերը:

Փաստաթուղթ	«Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու և շրջանառության հարկ վճարող համարվելու մի քանի հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	23.01.2015թ, N 2
Հրատարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 4(516), 02.02.2015թ.
Ուժի մեջ է	23.01.2015

**Համառոտնկարագիր**

Պարզաբանմամբ սահմանվել է, որ.

- ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը տվյալ տարվա ընթացքում իր հայեցողությամբ կարող է իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և համարվել շրջանառության հարկ վճարող՝ հայտարարության մեջ նշված ժամկետից (բայց ոչ շուտ քան հայտարարության ներկայացման օրվանից)
- եթե ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը որպես այդպիսին համարվելու և դադարելու նպատակով ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, սակայն հետագայում պարզվում է, որ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության մեջ նշված ժամկետից ավելի վաղ ժամկետում ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը դադարել է համարվել որպես այդպիսին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերն ի հայտ գալու հիմքով, ապա «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում անձը կարող է

Ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ նոր հայտարարություն և համարվել շրջանառության հարկ վճարող՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը, եթե չի լրացել այդ փաստերը տեղի ունենալու օրվան հաջորդող 20-րդ օրը: «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերը տեղի ունենալու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ նոր հայտարարություն չներկայացնելու դեպքում անձը «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող:

Փաստաթուղթ	«ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» արձանագրությանը միանալու մասին» արձանագրությանը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիր
Ամսաթիվը և համարը	27.02.2015թ, ՆՀ-221-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 13 (1102), 11.03.2015թ
Ուժի մեջ է	12.03.2015

### Համառոտ նկարագիր

Հրամանագրով հաստատվել է 2015 թվականի հունվարի 26-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությանը միանալու մասին» արձանագրությանը:

Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ՀՀ ներմուծվող ապրանքների մասով ավելացված արժեքի հարկով հարկման բազայի որոշման վերաբերյալ » ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	27.02.2015թ, N 4
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 7 (519), 16.03.2015թ
Ուժի մեջ է	12.03.2015

## **Համառոտ նկարագիր**

Պարզաբանմամբ հստակեցվել է, որ ԵՏՄ անդամ պետություններին Զայաստանի Հանրապետությունն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների (բացառությամբ ծխախոտի արտադրանքի) մասով ԱԱՀ-ով հարկման բազայում, բացի «Զայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկություններին» մասին» Զայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ԱԱՀ-ի հարկման բազայի լրացուցիչ բաղկացուցիչներից, ներառվում է նաև այդ ապրանքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարը:

Զայաստանի Հանրապետությունն ներմուծվող ծխախոտի արտադրանքի մասով ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է «Զայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկություններին» մասին» Զայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն:

## **2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ**

### **2.1 Այնպիսի գանգատարկումների և ծառայողական քննությունների**

2015թ. հունվարի 20-ից մինչև 2015թ. մայիսի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 97 որոշում, որից բավարարվել է 34, բավարարվել է մասնակի 10, մերժվել է 44, կասեցվել է 6, կարճվել է 3:

2015թ. հունվարի 20-ից մինչև 2015թ. փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննությունն անցկացնող հանձնաժողովի կողմից իրականացվել են թվով 12 ծառայողական քննություններ, որոնց արդյունքում թվով 9 ծառայողներ ենթարկվել են տարբեր տեսակի կարգապահական պատասխանատվության:

2015թ. մարտի 20-ից մինչև 2015թ. ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննությունն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 2 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 4 ծառայողներ ենթարկվել են տարբեր տեսակի կարգապահական պատասխանատվության:

**2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող  
եկամուտների վերաբերյալ տվյալներ<sup>1</sup>**

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	Հաշվետու տարի՝ հունվար-մայիս 2015	
			Հունվար- մայիս	Աճի տեմպ %
1	<b>ՀՀ ՖՆ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք</b>	մլն դրամ	409,725.2	100.5
1.1	<b>Հարկային եկամուտներ, այդ թվում</b>	մլն դրամ	398,414.8	100.8
1.1.1	ԱԱՀ, այդ թվում	մլն դրամ	159,859.1	95.9
1.1.1.1	ԵՏՄ պետությանը ուղարկվող ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	12,225.0	-
1.1.2	Ծահուլթահարկ	մլն դրամ	47,421.0	95.5
1.1.3	Եկամտային հարկ	մլն դրամ	120,960.9	104.7
1.1.4	Ակցիզային հարկ, այդ թվում	մլն դրամ	17,004.3	101.2
1.1.4.1	ԵՏՄ պետությանը ուղարկվող ներմուծվող ապրանքների համար	մլն դրամ	1,046.8	-
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	4,441.9	69.5
1.1.6	Արտոնագրային վճար	մլն դրամ	2,596.2	97.1
1.1.7	Հաստատագրված վճար	մլն դրամ	1,298.0	43.9
1.1.8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	մլն դրամ	10,876.8	109.7
1.1.9	Մաքսատուրք, այդ թվում	մլն դրամ	25,024.1	128.1
1.1.9.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	մլն դրամ	19,462.3	-
1.1.10	Նպատակային սոցիալական վճար	մլն դրամ	4,014.3	-
1.1.11	Այլ հարկային եկամուտներ <sup>2</sup>	մլն դրամ	4,918.3	99.3
1.2	<b>Պետական տուրք</b>	մլն դրամ	11,310.4	90.6

<sup>1</sup> Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

<sup>2</sup> Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային վճարները, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը, միասնական մաքսային վճարը և այլ եկամուտներ:

**2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2015թ. հունվար-մայիս
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	9515
1.1	Ֆիզիկական անձ	հատ	7723
1.2	Իրավաբանական անձ	հատ	1792
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	-
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերության ներքին և արտասահմանի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (FU) թիվ	հատ	320
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերության ներքին և արտասահմանի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (FU) արդյունքում առաջարկված գումարներ	մլն դրամ	7,474.5
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	<b>2015թ. հունվար-մայիս</b> 7192
5.1	Բավարարված	հատ	269
5.2	Մերժված	հատ	7
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	4705
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլրդ. դրամ	4.607
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	11008
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն	մլն. դրամ	203,2

	փաստացի գումարներ գանձված		
8	Չարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	1026
8.1	Չարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլրդ. դրամ	2.951
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	58
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	660,5
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	510
10.1	Ավարտված	հատ	11
10.2	Մեղադրական եզրակացությունը դատարանի կողմից փոփոխված	հատ	11
10.3	Կասեցված	հատ	8
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլրդ. դրամ	1.751